«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Հետազոտության թեման՝ «Խաղային տեխնոլոգիաների կիրառումը առարկայի դասավանդման գործընթացում»

Առարկան՝ ինֆորմատիկա

Հետազոտող ուսուցիչ՝ Արփինե Մանուկյան

Ուսումնական հաստատություն՝ «Վերին Պտղնիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Բովանդակություն

1. Ներածություն ---------- 2
2. Գրականության ակնարկ ---------- 4
3. Գործնական համատեքստ ---------- 6
4. Հետազոտության ընթացք ---------- 8
5. Տվյալների մշակում և վերլուծություն ---------- 18
6. Եզրակացություն ---------- 22
7. Գրականության ցանկ ---------- 23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսուցչի աշխատանքի և աշակերտների ուսումնական հաջողությունների արդյունքները դպրոցում չափվում են ձեռք բերված գիտելիքներով, կարողություններով ու հմտություններով: Կյանքը անընդհատ և անդադար առաջընթաց է ապրում: Դպրոցի կարևորագույն խնդիրներից է դառնում աշակերտների ճանաչողական հետաքրքրությունների, ստեղծագործական մտածողության, ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողությունների ձևավորումն ու զարգացումը:

Դպրոցի կարևորագույն խնդիրներից են դառնում ուսուցումը հետաքրքիր դարձնելը, ուսուցման գործընթացում ստեղծագործական մոտեցման ապահովումը, հետաքրքիր, բայց հրապուրիչ խնդիրների առաջադրումը: Այդ նպատակով անհրաժեշտ է գտնել ուսուցման այնպիսի հնարներ, որոնք ոչ միայն ցանկալի լինեն երեխաների համար, այլև ունենան ուսուցողական, ճանաչողական նշանակություն, խթան հանդիսանան աշակերտների ստեղծագործական միտքը զարգացնելու գործում:

Ժողովրդական դաստիարակության և դպրոցական շրջանում Խաղը լայն տարածում ունի: Խաղը հոգեհարազատ և սիրված է երեխաների կողմից: Խաղը բացի ժամանցային բնույթ կրելուց, այն ունի նաև դաստիարակչական, ուսուցողական նշանակություն: Դասագործընթացում այն հանդես է գալիս որպես միջոց, մեթոդ գիտելիքը տեղ հասցնելու համար: Այդ է պատճառը, որ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է գտնել ուսուցման համար այնպիսի տարբերակներ, որոնք ոչ միայն ցանկալի լինեն երեխաների համար, այլև նրանց համար լինեն ուսուցողական:

Խաղը մարդկային գործունեության ամենահետաքրքիր ձևերից մեկն է: Խաղային տեխնոլոգիաների կիրառումը մանկավարժության տեսության մեջ և պրակտիկայում նորություն չէ: Այն ծագում է մանկության շրջանում և ուղեկցում մարդուն ամբողջ կյանքի ընթացքում: Մանկավարժության և հոգեբանության տեսաբանները գտնում են, որ երեխայի հոգեբանությունն ու անհատականությունն առաջին հերթին ցայտուն և անմնացորդ արտահայտվում են խաղի մեջ: Խաղը երեխայի համար

կենսաբանական ներքին պահանջմունք է: Խաղի միջոցով երեխան ճանաչում է իրեն շրջապատող այն երևույթները, որոնք ի հայտ են գալիս նաև խաղային իրավիճակներում: Խաղին հատուկ կարևորություն է տրվում կրտսեր դպրոցական տարիքի երեխաների ուսուցման, դաստիարակության գործում: Զարգացման այդ շրջափուլի գործունեության հիմնական տեսակը շարունակում է մնալ խաղը, ուսուցման հետ զուգահեռ: Այդ տարիքում խաղն անձի ձևավորման կարևորագույն միջոց և գործոն է, ուստի մանկավարժության մեջ մ կարևորություն է տրվում խաղի դերին և ուսուցմանը խաղի միջոցով: Խաղային տեխնոլոգիաների կիրառումը դասերի ընթացքում նպաստում է աշակերտների ակտիվացմանը՝ և մարմնաշարժողական, և իմացական առումներով: Ակտիվությունն անհրաժեշտ պայման է ժամանակակից մանկավարժական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար: Խաղը դասարանում ստեղծում է նոր, յուրահատուկ միջավայր: Եթե ուսուցիչ-աշակերտ և աշակերտ-աշակերտ փոխհարաբերություններում մինչ այդ գոյություն են ունենում պատնեշներ, ապա խաղի շնորհիվ դրանք աստիճանաբար անհետանում են: Այդ մթնոլորտը հնարավորություն է տալիս, որ աշակերտներն անկաշկանդ արտայահտեն իրենց մտքերը և աննկատ ընդգրկվեն ակտիվ ուսուցման մեջ:

Հաղորդակցման, ուսուցման և կյանքի փորձի ձեռքբերման միջոց է հանդիսանում խաղը:

Հետազոտության օբյեկտը - Տարրական դպրոցի ուսուցման գործընթացը

Հետազոտության նպատակը - Ուսումնասիրել խաղային տեխնոլոգիաների արդյունավետությունը, ուսումնական և զարգացնող հնարավորությունները դասի պրոցեսին, դրանց միջոցով զարգացնել երեխաների արագ կողմնորոշվելու կարողությունը, արագաշարժությունը, ճարպկությունը, խաղի միջոցով թեթևացնել ուսուցման գործընթացը:

Հետազոտության խնդիրները- Ի՞նչ դեր ունեն խաղային տեխնոլոգիները ուսուցման պրոցեսում, որքանո՞վ են ազդում դպրոցականների ստեղծագործական մտածողության զարգացման վրա և ի՞նչ արդյունավետություն ունեն դասի պրոցեսին:

Հիմնավորել խաղի դերը դպրոցականների ուսումնական գործընթացի զարգացման գործում:

Գրականության ակնարկ

Մեծն Հ.Թումանյանը գտնում է. « Խաղը երեխայի բնական, օրգանական պահանջն է, նրա լրջությունը, նրա էությունը»:/,,Խաղի դերը դպրոցական տարիքում հոդված/

Խ.Աբովյանը հորդորում է մանկավարժներին «չզրկել երեխաներին անմեղ խաղերից»: Իր « Պարապ վախտի խաղալիքը » աշխատության մեջ նա կարևորում է երեխաներին ուրախություն և հաճույք պատճառելու գործում հետաքրքիր զրույցների և մանկական խաղերի դերը»:

Ղ. Աղայանի՝ մանուկների համար հորինած խաղերն ու բանաստեղծությունները կենսունակ են, որովհետև գրված են անկեղծությամբ և մանուկների ներաշխարհի խոր իմացությամբ: Աղայանը երեխաներին սիրում էր անմնացորդ կերպով: Մանուկների աշխարհը և դաստիարակությունը նրա տարերքն էր: Մանկական խաղերը պարզաբանելով՝ Աղայանը գրում էր. « Երեխան ոգի ունի. ուզում է զվարճանալ, երգել, խաղալ, մտածել և դատել»: Ղ. Աղայանը սեփական կենսափորձով հիմնավորում էր, որ յուրաքանչյուր խաղ ունի իր հատուկ նշանակությունը.զարգացնում է երեխայի այս կամ այն ունակությունը, հարստացնում միտքը, ապահովում նրա ներդաշնակ զարգացումն ու կրթությունը: Նա շեշտում է, որ խաղը երեխայի ինքնուրույն ստեղծագործական գործունեությունն է: Քանի որ հետազոտական աշխատանքի համար ընտրել եմ խաղը, որը կրտսեր դպրոցականների կյանքում, ինչպես նաև ուսուցման գործընթացում անբաժան մաս են կազմում, ուստի ուսումնասիրել եմ գրականություն խաղերի վերաբերյալ, ինչպես նաև օգտվել եմ համացանցից՝ փորձելով ավելի խորը ուսումնասիրել և ճանաչել խաղի դերը կրտսեր դպրացականի կյանքում:.

« Երեխան երկու աշխարհ ունի՝ իրական աշխարհ (ռեալ մեծահասակների աշխարհ, որ երեխան ներգրավվում է 6-7 տարեկանից) և խաղային աշխարհ,որը

պատկանում է երեխային: Եվ քանի որ երեխայի հնարավորությունները, կարողությունները զարգացած չեն, նա այլ ելք չունի, քան խաղային աշխարհում ապրելը: Այն երեխայի ստեղծած երևակայական աշխարհն է՝ ոչ ռեալ, ոչ իրական, որը, գուցե և նախապատրաստում է, օգնում է երեխային անցնելու մեծերի իրական աշխարհ»: Պիաժե ու Կոֆկա/,,Խաղը որպես խոսքի և սոցիալական հմտությունների զագացման ձև,,Նելլի Խաչիկյանի հոդվածից

« Մենք բոլորս ծնունդով մանկությունից ենք: Շատ հաճախ կարելի է զուգահեռներ անցկացնել կյանքի ու խաղային իրավիճակների միջև և եզրակացնել՝ վերջիններս ունեն ընդհանրություններ:Երեխան խաղի միջոցով իր երևակայությամբ ստեղծում է իրավիճակ, երևակայական աշխարհ լեցուն փորձություններով, որոնցից փորձում է ելք գտնել:Այսպիսով զարգանում է երեխայի երևակայությունը, տրամաբանությունը և հնարամտությունը»:/Զիգմունդ Ֆրեյդ Journalist թերթ/

« Երեխայի զարգացման հիմքում խաղն է: Խաղի միջոցով փորձ են ձեռք բերում և ուսումնասիրում են իրենց շրջապատող աշխարհը. նրանք բացահայտում են իրենց ֆիզիկական միջավայրը, արտահայտում են սեփական հույզերը:Խաղալիս նաև սեփական բառապաշար են ձևավորում» :

« Խաղը շատ բնական է ամբողջ աշխարհի երեխաների համար:Դա իսկապես կարևոր գործիք է երեխաների ճանաչողական, ֆիզիկական, սոցիալական և հուզական զարգացման, ինչպես նաև նրանց երևակայույան և ստողծագործական զարգացման համար »:/ BRAC կրթության զարգացման ինստիտուտի փորձագետներ Սայեդա Սազիա Զամանի և Ֆերդուսի Խանոմին /babycef.am կայք /

« Հենց խաղի անկախ ձևերն են ամենակարևորը մանկավարժությամ մեջ երեխայի զարգացման համար: Երեխայի անհատականությունն առավել հստակ դրսևորվում է խաղերում»: /Հետազոտողներ Լ.Ս.Վիգոտսկի,Դ.Բ.Էկլոնին hungrybags.ru կայք /

« Երեխաներին հրապուրում է շրջապատի մարդկանց գործունեությունը և նրանք ցանկանում են իրենց խաղերում նմանակել-վերարտադրել այն: Խաղացեք, ո՜վ մանկիկներ, շա՛տ խաղացեք: Շատ խաղացեք, բայց թե՛ տիկնիկ, և՛ թե բաժինք ձեր իսկ ձեռքով շինեցեք»:Ղ.Աղայան / Նաթելլա Հակոբյանի հոդվածից/

«Երեխան ապրում է խաղով. խաղով է սովորում, խաղալիս է մտածում, խաղալով է հաշվում: Խաղն է երեխայի գրավականը»: Վ.Ա.Սուխումլինսկի /European school ամսագիր/

«Երեխան հասարակության անդամ է և հասարակությունից դուրս ապրել չի կարող: Նրա հիմնական պահանջմունքն է ապրել շրջապատող մարդկանց հետ: Երեխան շրջապատող աշխարհի հետ գտնվում է ոչ թե ուղղակի, այլ միջնորդավորված կապի մեջ: Այդ կապն իրականացվում է սյուժետադերային խաղի միջոցով: Խաղը երեխայի գործունեության առաջատար ձևն է: Խաղը հենց այն գործունեության ձևն է, որով երեխան սկզբում էմոցիոնալ, իսկ հետո ինտելեկտուալ ձևով յուրացնում է մարդկային հարաբերությունների ողջ համակարգը: Ըստ Էլկոնինի, խաղը պատմական ծագում ունի, այն առաջ է եկել պատմական ծագման որոշակի փուլում, երբ դրվել է մեծերի աշխարհի և երեխայի աշխարհի բաժանման հիմքը:Տարանջատվում է մանկական աշխարհը մեծերի աշխարհից և վերջինս երեխայի համար դառնում է իդեալ և երեխաները իրենց խաղի մեջ այդ աշխարհը սիմվոլիկ իրականություն են դարձնում»: Դ.Բ.Էլկոնին/Խաղի ազդեցությունը երեխայի ուսուցմաան և զարգացնամ վրա/

Գործնական համատեքստ

Նոր գիտելիքներ հաղորդելու, ինչպես նաև գիտելիքների ամրապնդման նպատակով դպրոց հաճախելու հենց առաջին օրվանից անցկացվում են խաղեր՝ համատեղելով նաև օրվա նյութի հաղորդման հետ: Քանի որ երեխաների մոտ այնքան զարգացած չեն ուշադրությունը, ապա ավելի բարդ մեթոդներ կիրառելու համար օգտագործվում են խաղերը՝ հիշողությունը և հոգեկան մյուս գործընթացները նրանց տարիքային խմբի առանձնահատկություններին և մտավոր կարողություններին համապատասխան:

Խաղային տեխնելագիայի կիրառման հիմնական նպատակներից մեկը աշակերտի ուսուցման գործունեության ակտիվացումն է: Ակտիվության սկզբունքը ենթադրում է, որ ուսումնական գործունեությունը պետք է պարունակի մոտիվացիայի բարձր մակարդակ, գիտելիքների, կարողությունների յուրացման պահանջմունք, արդյունավետություն և համապատասխանություն սոցիալական նորմերին:

Երեխայի մտավոր կարողությունների ձևավորման հիմնական խնդիրներից մեկը

մտածողության և խոսքի զարգացումն է: Այս կարողությունները ձևավորվում և զարգանում են շրջապատող իրականությունը ճանաչելու ընթացքում: Հաշվի առնելով այս հանգամանքը, ուսուցիչը մեծ ուշադրություն է դարձնում այն մեթոդներին ու եղանակներին, որոնց կիրառումը նպաստում է երեխայի մտավոր գործունեության, ինքնուրույն մտածողության ձևավորմանը, սովորեցնում է փոփոխվող իրադրություններում օգտվել ձեռք բերված գիտելիքներից և փորձից: Խաղային տեխնոլոգիան ակտիվ ուսուցման իրականացման տեխնոլոգիաներից է:

Վեց տարեկան երեխան, դպրոց հաճախելով, մտնում է նոր, ավելի բարդ հարաբերությունների մեջ, բարդանում է նրա աշխատանքային գործունեության ձևերն ու բովանդակությունը: Նրա առջև դրվում են նոր խնդիրներ: Կյանքի և գործունեության այսպիսի փոփոխությունը նոր դպրոց հաճախող աշակերտից պահանջում է ավելի կատարելագործված մտավոր գործունեություն: Հենց այդ պատճառով երեխային մտավոր աշխատանքի տրամադրելու համար անհրաժեշտ է խաղը դարձնել հետաքրքիր, զբաղեցնող, ուսուցանող, միտք շարժող: Դասագործընթացում խաղի ճիշտ կազմակերպումն ու անցկացումը երեխային հնարավորություն է տալիս խաղի միջոցով ստանալ անհրաժեշտ գիտելիքներ, իսկ ուսուցչին՝ զարգացնել երեխաների մտավոր գործունեության տարբեր կողմերը: Որպես ուսուցման ձև, խաղերն իրենց բնույթով բարդ են, քանի որ դպրոցում իրականացնում են երկու նպատակ՝ ուսուցողական և խաղային: Խաղին մասնակցելով, աշակերտները սովորում են, իսկ ուսուցիչը ղեկավարելով խաղը՝ սովորեցնում է: Երբ խաղը հանդես է գալիս որպես նոր գիտելիքների հաղորդման միջոց՝ ուսուցչի դերն ավելի ընդգծված է լինում: Դասի ժամանակ խաղերն անցկացվում են աշակերտական մեծ ու փոքր խմբերով ուսուցչի ղեկավարությամբ, որոնց անցկացման նպատակն է հին նյութի և աշակերտներին հանձնարարվող նոր թեմայի ավելի արդյունավետ յուրացումը: Խաղերը՝ որպես ուսուցման յուրահատուկ ձև, ավելի ցայտուն են արտահայտվում երբ դրանք համատեղում ենք պարապմունքների հետ: Այս խաղերի մեջ ներգրավված պետք է լինեն բոլոր աշակերտները: Դասի ժամանակ խաղերն անցկացվում են աշակերտական մեծ ու փոքր խմբերով ուսուցչի ղեկավարությամբ, որոնց անցկացման նպատակն է հին նյութի և աշակերտներին հանձնարարվող նոր թեմայի ավելի արդյունավետ յուրացումը:

Խաղերը՝ որպես ուսուցման յուրահատուկ ձև, ավելի ցայտուն են արտահայտվում, երբ դրանք համատեղում ենք պարապմունքների հետ:

Այս խաղերի մեջ ներգրավված պետք է լինեն բոլոր աշակերտները

Խաղն ունի այնպիսի մանկավարժական դերակատարում, որ կարող է երեխային ընդգրկել ակտիվ ուսուցման մեջ: Մանկավարժության և հոգեբանության ոլորտը ներկայացնող մասնագետները գտնում են, որ երեխայի անհատականությունն ու աշխարհընկալումը առաջին հերթին լիարժեք և ամբողջական կերպով արտահայտվում են խաղի միջոցով: Այն երեխայի համար ոչ միայն կենսաբանական ներքին պահանջ է, այլև ճանաչողության միջոց և ուսուցման բաղկացուցիչ մաս: Խաղի ժամանակ երեխան ավելի է կենտրոնանում և հեշտությամբ է մտապահում թե իր, թե ընկերների արտահայտած մտքերն ու բազմաբնույթ գործողությունները: 6-ից 8 տարեկան երեխան ընկալունակ է և կարող է ըմբռնել բազմաբնույթ տեղեկատվություն: Նա դրանով զարմացնում է իր շրջապատին, սակայն նրա իմացական կարողությունները, կամային որակներն ու սոցիալական հմտությունները զարգանում են հաջորդ դասարաններում: Տարրական դասարաններում երեխայի համար խիստ կարևոր է խմբով որևէ խաղի մասնակցելը: Դա ինքնարտահայտման միջոց է դառնում յուրաքանչյուր երեխայի համար: Խաղի միջոցով բացահայտվում է նրա մեջ թաքնված ներուժը: Երբ դասն անցկացվում է խաղի միջոցով, որի ժամանակ դասի թեմային համապատասխան պարագաներ են օգտագործվում, ավելի հեշտ է նյութը ընկալվում աշակերտների կողմից:

Աշակերտի բամակողմանի զարգացման, ինքնահաստատման, ինքնակատարելագործման, ուշադրության կենտրոնացման կարևոր միջոց է խաղը: Այն բացահայտում է երեխայի բնավորության բոլոր կողմերը: Խաղի միջոցով կարելի է ոչ միայն կրթել, այլ նաև դաստիարակել երեխային:

Հետազոտության ընթացքը

ԽԱՂԸ՝ ՈՐՊԵՍ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՌԱՋԱՏԱՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամերիկացի հոգեբան Միխայ Չիկսենտմիխալին գտնում է.« Երջանկությունը հաճախ իրավիճակի պատահական պարգևն է, բայց մենք կարող ենք անել առավելագույնը՝ այդ պարգևն ստանալու համար»:

Երեխան պետք է ինքն իր վրա կրի պատասխանատվություն՝ հաղթահարելու կենցաղում հանդիպող դժվարությունները: Երեխաներին մշտապես օգնում և աջակցում են ծնողները, միջավայրը, ուսուցիչները: Դա հենց երջանիկ լինելու նախապայման է: Նրա մեջ պետք է զարգացնել այնպիսի որակներ, ինչպիսիք են լավատեսությունը, վստահությունը սեփական ուժերի նկատմամբ, պատրաստակամություն՝ օգնելու և աջակցելու ուրիշներին:

Մեր երեխաներին սնունդից և հագուստից առավել անհրաժեշտ են հուզական անդորր և ներդաշնակություն: Եթե երեխան կյանքի առաջին տարում հուզական բավարար կապի մեջ է շրջապատի հետ, ապա դա նախապայման է առողջ և երջանիկ կյանքի:

Խաղը երեխայի համար առաջնային գործունեություն է: Այն զգացմունքների արտահայտման և շրջապատող իրականության ճանաչման հզոր միջոց է:

Երեխան լրջորեն է վերաբերվում խաղին և նույնպիսի մոտեցում էլ պահանջում է շրջապատից:

Խաղը փոքրիկի համար նաև հաղորդակցման և ինքնաճանաչման միակ միջոցն է: Հատկապես կարևոր են այն խաղերը, որոնք հորինում է ինքը՝ երեխան:

Խաղի ժամանակ մասնակիցները պետք է ցուցաբերեն կամքի ուժ, համարձակություն, իրավիճակին ստեղծագործաբար մոտենալու կարողություն, այսինքն՝ բոլոր անհրաժեշտ որակները, որոնք ձևավորում են լավատեսություն:

Կարևոր է նաև հասակակիցների հետ շփումը: Նրանք սովորում են իրարից և ընդօրինակում միմյանց (ցանկալի և անցանկալի վարք): Խաղի ընթացքում

հնարավոր են նաև հիասթափություն, երբեմն վիրավորանքի, վախի և այլ զգացումների դրսևորումներ:

Խաղը որպես գործունեության ձև իրականացնում է մի շարք գործառույթներ.

- ✓ զարգացնող
- ✓ դաստիարակող
- ✓ շփման և հաղորդակցման
- ✓ կարգավորող
- ✓ առողջարարական/ թերապևտիկ

Խաղային գործունեությունը, ինչպես գործունեության յուրաքանչյուր տեսակ, ունի իր կառուցվածքը, որը ներառում է նպատակ, դրդապատճառ, իրականացման միջոցներ, գործողության պլանավորում և գործողության արդյունք: Խաղի կառուցվածքում որպես կարևոր միավոր դիտվում է խաղային դերը, որը մեծահասակի գործողությունների վերարտադրումն է: Խաղում գործում են երկու տիպի փոխհարաբերություններ՝ խաղային և իրական: Թե՛ նախադպրոցական, թե՛ դպրոցական տարիքում արդյունավետ է երեխաների համար կազմակերպել խաղային գործունեությամբ ընթացող ուսուցում: Դրա շնորհիվ նրանք դառնում են դիտունակ, սովորում են համեմատել, դասակարգել առարկաները՝ համաձայն այս կամ այն հատկանիշների: Իսկ դա նպաստում է նրանց մտավոր զարգացմանը, զուգահեռաբար զարգացնում ընկալունակությունը, խոսքը, ուշադրությունը:

Ընդունված է խաղերը բաժանել երկու հիմնական խմբի՝ ստեղծագործական և կանոնավոր:

1. Ստեղծագործական խաղերն ընդգրկում են սյուժետադերային խաղերը և խաղ-բեմականացումները:
2. Կանոնավոր խաղերի մեջ են մտնում դիդակտիկ, շարժողական, երաժշտական խաղերը և խաղ-զվարճանքները: Կանոնավոր խաղերն ունեն կանոններ, բովանդակություն, խաղային գործողություններ և խաղային արդյունք: Դրանց թվին են պատկանում դիդակտիկ խաղերը, որոնք ունեն ուսուցողական բնույթ:

Թերևս բոլոր խաղերը նպաստում են երեխայի զարգացմանը: Խաղային խնդիրների լուծմամբ երեխան ձեռք է բերում այնպիսի որակներ, ինչպիսիք են՝ մտքի և մարմնի ճկունությունը, հնարամտությունը, սրամտությունը, համբերատարությունը, հանդուրժողականությունը և այլն:

Յուրաքանչյուր խաղ ընտրելիս պետք է հաշվի առնել երեխայի տարիքային և անհատական առանձնահատկությունները:

ԽԱՂԻ ՀՈԳԵԹԵՐԱՊԵՎՏԻԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Խաղային թերապիան դիտարկվում է որպես նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների հուզակամային, հաղորդակցական ոլորտների դինամիկ շփման (կոռեկցիայի) միջոց: Հոգեբանական աջակցության բազմաթիվ ձևերի մեջ կարևոր դեր ունի խաղային թերապիան: Դրա հիմքում ընկած է երեխայի սիրելի զբաղմունքը և շփման ձևը՝ խաղը: Խաղաթերապիան նպաստում է միջանձնային փոխհարաբերությունների համակարգի ձևավորմանը: Այն անհրաժեշտ է մեծահասակի և երեխայի շտկողական ու զարգացնող փոխհարաբերությունների հաստատման համար: Խաղաթերապիայի նպատակահարմարությունը բացատրվում է երեք գործոնների առկայությամբ:

- Խաղը երեխայի համար առավել յուրացված գործունեության ձև է:
- Խաղի մեջ առկա է մասնակիցների հոգեբանական բնույթի և շփման հետևանքով առաջացող ապրումների միասնությունը:
- Խաղի ընթացքում երեխան ազատ է առօրյա լարվածությունից:

Խաղաթերապիան յուրահատուկ փորձություն է երեխայի սոցիալական և հոգեկան զարգացման համար: Որպես հոգեբանական աջակցության ձև այն ունի իր գործառույթները, սկզբունքները, կազմակերպման ձևերն ու տեխնիկաները:

Երեխայի հոգեբանական վերականգնման արդյունաբետությունն ապահովելու համար խաղաթերապիան և խաղային փոխազդեցությունը հիմնվում են որոշակի դրույթների վրա: Դրանք են՝

- չպարտադրված շփում
- դրական հետադարձ կապ
- խաղընկերների ոչ մրցակցային փոխհարաբերություններ
- ներգրավածություն գործընթացում

Գովասանքն իր մեջ չպետք է պարունակի երեխայի հաջողությունների և անձնային որակների համեմատություն, քանի որ այդ պարագայում երեխայի մեջ կառաջանան մերժողական դիրքորոշման, հասակակիցների հանդեպ նախանձի զգացմունքի ձևավորման նախադրյալներ: Նպատակային գովասանքը մեծահասակի կողմից երեխայի գործողությունների արդյունքների, նրա ճիգերի անկեղծ նկարագրումն է:

Այսպիսով, «խաղային թերապիան» մի գործունեություն է, որը քիչ թե շատ նույնանում է խաղի հետ: Խաղը երեխայի ինքնարտահայտման եզակի միջոց է, որը նրան հնարավորություն է տալիս ազատ ու անկաշկանդ խաղարկել սեփական զգացմունքներն ու խնդիրները:

ԽԱՂԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԴԵՐԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Խաղի մեթոդաբանական հիմքերի, սոցիալական բնույթի և սովորողի զարգացման գործում դրա ունեցած դերի ու այլ հարցերի մշակմամբ ժամանակակից մանկավարժության մեջ զբաղվել են Լ. Վիգոտսկին, Ա.Ն. Լեոնտևը, Դ. Բ. Էլկոնինը և այլք: Խաղային տեխնոլոգիաների կիրառումը մանկավարժության տեսության մեջ և պրակտիկայում նորություն չէ:

Վ.Ս. Կուկուշինը ներկայացնում է խաղային տեխնոլոգիայի առավել կարևոր հետևյալ գործառույթները.

- Սոսիալ-մշակութային նշանակությունը: Խաղը երեխայի սոցիալականացման կարևոր միջոցներից մեկն է:: Խաղի սոցիալ-մշակութային նշանակությունը ենթադրում է մարդու կողմից մշակույթի

յուրացման, անձի ձևավորման և դաստիարակման միջոց և թույլ տալիս նրան գործել որպես կոլեկտիվի լիարժեք անդամ:

- Խաղի ինքնիրացման գործառույթը: Սա խաղի հիմնական գործառույթներից մեկն է: Խաղը կարևոր է որպես անձի ինքնիրացման ոլորտ: Հենց այս տեսակետից առավել էական նշանակություն ունի խաղի գործընթացը և ոչ թե դրա արդյունքը:
- Հաղորդակցական գործառույթ: Խաղը հաղորդակցական գործունեություն է՝ կոնկրետ խաղային կանոններով: Այն մարդուն ներգրավում է իրական մարդկային բարդ հարաբերությունների համակարգի մեջ:
- Խաղի ախտորոշիչ գործառույթը: Խաղն ավելի ախտորոշիչ է, քան մարդու որևէ այլ գործունեության տեսակ: Այն յուրահատուկ է «ինքնարտահայտման միջոց է», որը հնարավորություն է տալիս բացահայտել թաքնված ներուժը:
- Խաղի թերապևտիկ գործառույթը: Խաղը կարելի է օգտագործել տարբեր դժվարություններ հաղթահարելու նպատակով: Գնահատելով խաղային գործելակերպի թերապևտիկ նշանակությունը՝ Դ. Բ. Էլկոնինը գրել է, որ խաղային թերապիայի արդյունավետությունը որոշվում է նոր սոցիալական հարաբերությունների հաստատմամբ, որոնց մեջ երեխան մտնում է դերային խաղում:
- Խաղի շտկողական գործառույթը: Խաղի միջոցով հոգեբանական շտկումն ընթանում է բնականոն ձևով: Շտկողական խաղերը կարող են օգնել շեղված վարքով աշակերտներին՝ հաղթահարելու այն ապրումները, որոնք խոչընդոտում են նրանց ներդաշնակ ինքնազգացողության կայացմանը և շտկմանը հասակակիցների միջավայրում:
- Խաղի զվարճացնող գործառույթը: Զվարճանքի ապրումը ծնվում է սովորականից տարբերվող, զանազանվող իրավիճակումներում: Խաղի զվարճացնող գործառույթն առնչվում է որոշակի հարմարավետության ու հաճելի միջավայրի ստեղծմանը: Խաղի զվարճանքը որոնումն է: Խաղը մոգական ուժ ունի: Այն ընդունակ է սնել երևակայությունը:

Այսպիսով, խաղը հսկայական դերակատարում ունի մանկավարժական գործընթացում: Այն նպատակային և ստեղծագործաբար կիրառելու դեպքում կարելի է հասնել բարձր արդյունքների: Խաղային տեխնոլոգիաները հիմք են թատերական

մանկավարժության համար: Դերերով խաղերը թատերական մանկավարժության նախատարրերն են, իսկ սոցիալ-խաղային տեխնոլոգիայի համար խաղային տեխնոլոգիան անփոխարինելի է: Սկզբնական կրթության մանկավարժական գործընթացը խաղային տեխնոլոգիաներով կազմակերպելու դեպքում նախադրյալներ են ստեղծվում անցնելու թատերական մանկավարժության տեխնոլոգիային և սոցիալ-խաղային ոճի ուսուցման իրականացմանը: Երեխան ուսուցման սկզբնական փուլից սկսած պետք է պատրաստ լինի ակտիվ գործունեության ու շարժման: Նա վարժվելու է նպատակային խաղի կազմակերպմանը, խաղի միջոցով սովորելու հնարներին, որպեսզի նույն հաջողությամբ մասնակցի թատերական մանկավարժության տեխնոլոգիաներով կազմակերպված դասերին: Ըստ էության, առավել նպատակահարմար և արդյունավետ է ուսուցման խնդիրների իրականացումը խաղի միջոցով: Խաղը մասնագիտական, ընտանեկան կյանքի և մարդկային ներդաշնակ հարաբերությունների ձևավորման դպրոց է: Սակայն սովորական դպրոցից դրա հիմնական տարբերությունն այն է, որ խաղի ընթացքում և խաղի միջոցով սովորելով՝ աշակերտը չի էլ կարծում, թե ինչ-որ բան է սովորում:

Խաղի կիրառումն ուսուցման գործընթացում հնարավորություն է ընձեռում ուսուցչի աշխատանքն առավել բազմազան ու ճկուն դարձնել:

« Խաղային մանկավարժական տեխնոլոգիաներ » հասկացությունը ներառում է բավականին ընդարձակ մեթոդների և հնարների խումբ: Մանկավարժական խաղը , ի տարբերություն այլ տեսակների, ունի էական հատկանիշներ: Դրանից են նպատակը և ակնկալվող մանկավարժական արդյունքը :

Խաղը ժամանակակից կրտսեր դպրոցի ուսուցման և դաստիարակության գործընթացը կատարելագործելու և բարելավելու հզոր գործիք է: Խաղային տեխնոլոգիաների կիրառումը առավել արժևորվել է հատկապես վերջին շրջանում, երբ դպրոց մուտք գործեցին 5.8-6 տարեկան երեխաները: Այդ կերպ ստեղծվում են ուսման դրական դրդապատճառներ և նպաստավոր մթնոլորտ: Խաղային տեխնոլոգիաները լայն տարածում են գտել ժամանակակից դպրոցում:

Կրտսեր դպրոցում այսօր հաջողությամբ կիրառվում են խաղ-բեմականացումները, որոնք կարելի է անցկացնել առաջին դասարանցիների հետ: Պարզելու համար, թե երեխաներն ինչպիսի խաղային փորձով են եկել դպրոց, հենց

սեպտեմբերից անհրաժեշտ է կազմակերպել նմանատիպ աշխատանքներ: Կ.Դ. Ուշինսկին ասում էր, որ դպրոց ընդունված երեխան պետք է կարողանա ճիշտ ընկալել շրջապատում կատարվող իրադարձությունները, ճիշտ մտածել և արտահայտվել, կարդալ գիտակցորեն և խորհրդածել կարդացածի մասին: Ուստի անհրաժեշտ է կիրառել մեթոդներ, որոնք կնպաստեն դիտողականության, մտքերը խոսքով արտահայտելու և այլ կարողությունների ձևավորմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դասի ընթացքում աշակերտները ձեռք են բերում նոր գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ: Խաղի ընթացքում երեխան նաև տիրապետում է վարքի բարոյական նորմերին ու կանոններին, որոնք որոշիչ դեր են խաղում նրանց անձի ձևավորման գործում: Զարգանում է աշխատասիրություն, ուշադրություն , պատասխանատվության զգացում: Մեր կողմից կատարված ուսումնասիրությունը ցույց տվեց, որ խաղը դպրոցականի համար ուսուցման լավագույն միջոցներից է: Խաղի ընթացքում է, որ ուսուցիչը ավելի լավ է տեսնեում երեխայի ուշադրությունը, ինքնավստահությունը, արագաշարժությունը, շուտ կողմնորոշվելու ունակությունն ու ճարպկությունը: Օգտագործելով խաղային մեթոդները՝ կրտսեր դպրոցականների ուսուցման գործընթացում կարելի է գալ այն եզրահանգման, որ դասը դառնում է ավելի արդյունավետ ու նպատակային: խաղային տեխնոլոգիաների շնորհիվ դասերը դառնում են հետաքրքիր, բարելավվում է ուսուցման որակը, զարգանում է սովորողների տրամաբանական, ալգորիթմական ու ստեղծագործական մտածողությունը, ձևավորվում է որոնողական աշխատանքներ իրականացնելու կարողությունը, որոնք երեխաներին դարձնում են ինքնուրույն, նախաձեռնող ու դրանով իսկ նախապատրաստում կյանքի տարբեր իրավիճակներում արագ ու ճիշտ կողմնորոշվելուն, ինչն էլ կայացած մարդու գրավականն է:

«Յուրաքանչյուր երեխա ինչ-որ չափով հանճար է, իսկ յուրաքանչյուր հանճար՝ ինչ-որ չափով երեխա»:

Ա.Շոպենհաուեր

Գրականության ցանկ

1. Ն.Բարսեղյան-« Խաղերը ուսուցման արդյունավետ միջոց»-Երևան 2001թ.
2. Մ.Սիմոնյան-« Խաղը որպես կրտսեր դպրոցականի ճանաչողական գործունեության Բարելավման միջոց »- Երևան 2004թ.
3. Ն.Բարսեղյան-« Խաղերը ուսուցման արդյունավետ միջոց»-Երևան 2001թ.
4. Ջ Գյուլամիրյան-« Խաղալով սովորենք»-Երևան 2008թ
5. Հ.Մամյան-« Խաղը որպես ուսուցման միջոց:Խաղերի կիրառությունը դպրոցում»-Երևան 2013թ.
6. Ֆ.Աճեմյան-« Հիշողությունը զարգացնող խաղեր»-Երևան 1999թ.
7. Ա.Օհանյան-« Ուշադրությունը զարգացնող խաղեր»---Երևան 2007թ.
8. Ն.Գրիգորյան--« Ուշադրությունը զարգացնող խաղեր»---Երևան 2012թ.
9. Ա.Բաղդասարյան-« Խաղալով սովորեցնենք»-Երևան 2001թ.
10. Գևորգյան Ա-« Ուսուցում և խաղ»-Երևան 2013թ.
11. Թադևոսյան Ե.« Խաղից անցում ուսումնական գործընթացին»-Երևան 2011թ
12. Քարամյան Գ.« Խաղային տեխնոլոգիաների կիրառումը տարրական